ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 656 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 5-Ի N 298-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը՝

1. Սահմանել, որ Շրջակա միջավայրի նախարարության «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (ՀՎՀՀ՝ 01573524) կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2022 թվականի մայիսի 5-ի «Բնապահպանական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացվող «Բնապահպանական պայմանների բարելավում» ծրագրի մասին» N 298-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրակա-նացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բի Թու Ջի» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 05032652) 2024 թվականի հուլիսի 8-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-24/51-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է քլունգների, բահերի, խոտհնձիչ մեքենաների, սաղավարտների և ականջներին դրվող ականջակալների ձեռքբերում՝ 1,348,700 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մեյդ Թու Մեյք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01570843) 2024 թվականի հունիսի 21-ին կնքված՝ N ՀՀ-ԲԾ-Ա-ԳՀԱՊՁԲ-24/45 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պաշտպանիչ հատուկ ակնոցների և ժայռամագլցման կոշիկների ձեռքբերում՝ 737,833.3 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

18.09.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ